

ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
 ոչկարիոյ համար 10 Ժր.  
 Տարեկան 5 »  
 Արտասահմանի հա-  
 մար տարեկան 12 »  
 վեցամսեայ 6 »  
 ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼԻ  
 —)(—  
 Կրտսերիս հետ չեն տրուիր  
 —)(—  
 Իմանդումն տոյր 20 սան-  
 քիս Կ. Երեմիան առ ի սն-  
 ցանկերու համար 20 Օլո  
 զեղջ կրուայ :

# ՇԱՐՋՈՒՄ

Պատկան է գրամ դրկեյ  
 Խմբագրութեան հասցիին  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ՝ ՍՈՒԲԻԱՍԵԱՆ

## ՔԵՆ ՊԱՅՈՂՆԵՐԸ

Փորձեցէք հանրային օնէ կա-  
 րեւոր գործի մը համար հարուստ  
 ազաներու և կամ խելացի պարոն-  
 ներու գուռը ափ առնել, ու ահա  
 ձեր գէտը պիտի գտնէք իրական  
 գէտքերը, իրենց բոլոր մերկու-  
 թեանը ու ծամածռու թեանը մէջը :  
 Ան ազապարոններու մեծա-  
 մասնով ինչը արդէն համամիտ  
 գտնուած է ձեզ հետ՝ գործին  
 օգտակարութեանը մասին, ընդ-  
 հանուր կամ մասնաւոր խօսակ-  
 թիւններու մէջ, բայց երբ գոր-  
 ծելու ժամը կուգայ, երբ դիմում  
 կը լլուր իրենց որ գրական փաս-  
 տերով ալ ապացուցանեն իրենց  
 քարոզած սկզբունքն ու համո-  
 ղումը, շատերու համար խնդիրը  
 կը փոխուի. կարծիքի տարբե-  
 լու թիւններ կը սկսին երևան  
 գալ. և ինքզինքնին ամէն բա-  
 րոյական պարտականութենէ,  
 նիւթական ու մտաւոր զոհողու-  
 թիւններէ ազատ պահելու հա-  
 մար ամէն ճիգ կը ըմբիեն, և  
 նոյն իսկ չեն վարանիր շատ մը  
 երեւակայական վախերով ու ար-  
 զելքներով ալ զքեզ ձեռնթափ  
 ընելու աշխատիլ :  
 Բայց սա գէտքերէն ամենէն  
 յատկանշականն ու հետաքրքրա-  
 կանը «քէն պահողներուն է» :  
 Ասոնք չուզելով մէկտեղ ունէ  
 պղտիկ զոհողութիւն մը ընել,  
 կաշխատին նաեւ որ բան մը չի  
 պակսի իրենց ազգասիրի, մար-  
 դասիրի և ուրիշ շատ մը սիրա-  
 կան տիտղոսներէն. երկար խօս-  
 քերով, անվերջ քարոզներով կը  
 շանտահամարու որ իրենք թէ և  
 շատ կը համակրին այդպիսի ձեռ-  
 նարկներու, շատ կը փափագին  
 որ օժանդակեն, բայց մեղք սր...  
 քէն ըրած են :  
 Մէկը թաղական եղած ատենը  
 պէտք եղածին պէս չէ յարգուել,  
 ուրիշ մը աչքին փրկութեանը  
 համար իր քրտինքը ու արիւնը  
 թափելու համար ծրարիր մը պատ-  
 րաստեր է բայց շուտով մոռցուել  
 է, մէկ ուրիշն ալ գրամական  
 զոհողութիւններ ըրեր, բայց

փոխարէն չարիք միայն տեսեր  
 է, և սոսր համար որոշած են,  
 նոյն իսկ երգում ըրած, չի մաս-  
 նակցիլ հանրային գործերու :  
 Աւելորդ է ըսել թէ քէն պա-  
 հպներուն առ պատճառաբանու-  
 թիւնները մեծ մասամբ երեւա-  
 կայական են, և պարզապէս  
 տեսչուած են պատուաւոր կեր-  
 պով փախուստ տալու հասար :  
 Ան որ քիչ ու շատ հանրային  
 գործերու մէջ ծառայած է, բը-  
 նական է որ իր գէտը արդեւք-  
 ներ տեսած պիտի ըլլայ. տրուած  
 աշխատութիւնները շատ անգամ  
 չեն հասկցուիր կամ սխալ կը  
 մեկնուին. քննադատութեան անկ  
 շատ անգամ անիրաւ գոտափե-  
 տութիւնը կուգայ անկեղծ ջան-  
 քերը թունաւորելու, սակայն ի՞նչ  
 պիտի ըլլար հանրային գործերու  
 վախճանը, եթէ փոքրիկ վիրա-  
 րանք մը ընդունող քէն ընէր  
 ու անկիւն մը քաշուէր :  
 Անհեթեթ է սպասել, որ ազգը  
 մեր տուած ամէն մէկ ոսկիին  
 փոխարէն մեզի մէջմէկ արձան  
 կանգնէ :  
 Իրաւ է, հասարակութիւնը շատ  
 անգամ ան շփացած տղան է, որ  
 զինքը կերակրող ձեռքը կը խած-  
 նէ. իսկ ծայրայեղ միամիտներ  
 չեն անոնք, որ պղտիկ ծառայու-  
 թեան մը փոխարէն կուզեն որ,  
 ազգը ծունկի գայ իրենց առջև  
 և ամէն մէկ խօսքերին պատ-  
 զամի մը անկ ընդունին :  
 Եթէ ատ վիրաւորուած սիրտերը  
 քէն ընելէ առաջ քիչ մը խոր-  
 հէին և համեմատութեան գնէին  
 իրենց ուժերը ու ըրած զոհողու-  
 թիւններն, չեմ յուսար որ իրենց  
 մեկուսացումը արդարանար ի-  
 բենց խղճին առջև, և այսօր չի  
 պիտի ստիպուէիք անոնց երեսին  
 պոռալու :  
 «Պարտնեն'ը, դուք կեղծաւոր-  
 ներ էք պարզապէս, աւելի ստոր  
 քան ան' որ համարձակ չեմ տար  
 կրէք, որովհետեւ տալու սովո-  
 րութիւնը չունի, և չաշխատիր  
 հանրային գործերու, որովհետեւ  
 իրմէն դուրս մարդ չի ճանչնար :  
 Իսկ դուք մեծ երեւնալ կուզէք  
 երբ ոչինչ էք, բարերար հռչա-  
 կուիլ կուզէք, երբ ձեր բոլոր

ջանքերը միմիայն նուիրուած են  
 ամէնուն թափած աչքի լոյսերովը  
 ձեզի համար փառքի լուսապսակ  
 մը շինելու :»  
 ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ  
 ԱՒԱՆՂԱՍՈՒԹԻՒՆԸ  
 շԱՅ ՎԱՐՓԱՐԱՆԵՐՈՒ ՍԷՋ  
 Գ.  
 Ըսինք թէ՛ մեր կրթական ծրա-  
 դիրները սխալ ըմբռնումներով ու  
 շատ թերի կերպով պատրաստուած են  
 և երբեք ճշգրտութեամբ չեն գործադ-  
 րուիր. այդ պատճառաւ մեր այսօր-  
 ուան վարժարաններն ալ հինիւրուն  
 պէս աւանդականութեամբ միայն  
 կառավարուող կողմնացոյցէ զուրկ  
 նաեւ կը նմանին :  
 Ահա այդ բանը հաստատող քանի  
 մը զլխաւոր փաստեր :  
 Եթէ հին ատենները նարեկն ու  
 Գործող իրենց անհասկանալի լեզուով  
 և անըմբռնելի լուսատու, խեղճ տղոց  
 ուղիղ կը ճաթեցնէին, այսօր իբր  
 թէ հասկանալի բացատրութեամբ և  
 զիբուսոյց եղանակներով պատրաս-  
 տուած դասագրքերն են որ՝ շնորհիւ  
 իրենց սխալ և անսխալ գործածու-  
 թեան մասնակներու յիշողութիւնը  
 կը ծանրաբեռնեն ու միտքը կը խան-  
 գարեն :  
 Յայտնի է թէ դասատուն ըստ սա-  
 րիքի և բնութեան տղուն մասուոր  
 և հոգեկան կարողութիւնները գոր-  
 ծունկութեան մէջ պիտի գնէ, և  
 այդպէսով դասին կենդանութիւն մը,  
 կենք մը պիտի տայ, որպէս զի կա-  
 րենայ ամէն ուսուցում արդիւնաւոր  
 կերպով աւանդելու Ուրեմն աշակերտը,  
 ուսուցչի օժանդակութեամբ և զրգ-  
 մամբ, պէտք է ամէն բան անձամբ  
 տեսնելով, քննելով ու գտնելով իւ-  
 րացնէ, ինչպէս որ կերակուրներն  
 ալ անձամբ ծամելով ու մարմնով  
 միայն կրնայ իր մարմնուն փոխար-  
 կել : Բայց որպէս զի տղուն մասուոր  
 ու հոգեկան կարողութիւնները մէ-  
 թոտով և որոշ ուղղութեամբ գոր-  
 ծեն, հոգեբան գասատուն պարտքն  
 է միշտ հսկել և զանոնք օգտակար  
 և արդիւնաւոր կերպով գործունեու-  
 թեան մէջ գնել՝ առանց աշակերտին  
 չափազանց յագնու թիւն ու ձանձրոյթ  
 պատճառելու :  
 Մեր ուսուցիչներէն շատերը սա-  
 կայն դեռ չպիտեն թէ իրենց պաշ-  
 տօնը ի՞նչ բանի մէջ կը կայանայ :  
 «Այ՛ ինչ էլ չեն մինչեւ այնինչ էջը  
 սորվեցէք» կ'ըսեն, առանց կանխա-  
 դասը բացատրած ու պատմած ըլլա-  
 լու, զրքի պարունակութեան բառա-  
 կան արտասանութիւնը միայն կը պա-

հանջեն աշակերտէն : Ահա այս պատ-  
 ճառաւ է որ խելացի ուսանողը կա-  
 տարեալ ծոյլ մը և կամ աղուոր  
 ընդօրինակող մը, ամէն բան մեքե-  
 նաբար կրկնող թու թակ մը կը գառ-  
 նայ, զուրկ ամէն անհատականու-  
 թենէ և ձեռնբեցութենէ :  
 Կը պարմանամ ուրեմն թէ ի՞նչու  
 ուսուցիչներու կը վճարեն և ծնողք  
 իրենց զաւակները վարժարան ու-  
 զարկելու ձանձրոյթը յանձն կառ-  
 նեն, երբ աշակերտը կրթելու և  
 դաստիարակելու համար բաւական կը  
 համարուի անոնց ձեռքը քանի մը  
 դասագրքեր տալ ու զանոնք մեքե-  
 նաբար կարդացնել :  
 Բայց պատուելիական ծոյլ ան-  
 տարբերութիւնը, սխալ մէթոտներու  
 կիրարկումը հոտ չի վերջանար. ամէն  
 դաս, թէ լեզուներն և թէ գիտու-  
 թիւնները մեր մէջ աւանդական հին  
 միջոցներով կը դասախօսուին :  
 Ընթերցումները սեղի կուսնանան  
 եղանակաւոր ձայնով մը, առանց  
 բացատրութեան, բառագիտութեան  
 և տարականխու զննութեան. և  
 արդէն տղան կարգալ կը սորվի ո՛չ  
 թէ շարժական տառերու, պատկեր-  
 ներու օգնութեամբ և նոր մէթոտ-  
 ներով, այլ կ'իւն այն՝ կա՛, կ'իւն ին՛  
 կ'ի՛, կ'իւն վո՛ կ'ո՛, կ'իւն Ը՛ կ'ո՛ հին և  
 բարբարոս գրութեամբ : Ասոր հա-  
 մար է որ մեր աղաքը ոչ միայն  
 զժուար կը սորվին, այլ և խիստ գէշ  
 կը կարգան : Հարցուցէք տղու մը  
 քանի տարեկան ըլլալը. իր բնական  
 ձայնով պիտի պատասխանէ ձեզ .  
 կարդացուցէ՛ք իրեն ու և է մէկ պա-  
 սազիրքը, և ահա պիտի սկսի կ'իմալ  
 և սխալներ հանելով, կարգաւ տեղ  
 պարզապէս կրգել :  
 Ուղղագրութեան համար դասա-  
 տուին թելադրած հաստատունները նա-  
 խապէս չեն բացատրուիր աշակեր-  
 տին, այնպէս որ ան կը գրէ առանց  
 գրածին իմաստը հասկցած, և փոք-  
 րիկ օրինակներու միջոցաւ նախա-  
 պէս ուղղագրական գրիտուոր կանոն-  
 ները սորված ըլլալու : Զարմանալի  
 չէ ուրեմն որ ուղղագրութեան դա-  
 սերը շատ ձանձրալի և սպարդիւն  
 թուին աշակերտին :  
 Կ. ՊԻՕՆ  
 (Շարունակելի)

Վ Ր Ի Պ Ա Կ

Նախորդ թիւին «Բաղաքական  
 Լուրերուն» մէջ գործաւորական սօսի  
 առիւթ սխալմամբ «չինքերն ճառա-  
 խօսութիւններ կատարուած են»  
 գրուած էր, փոխանակ «լեհերն»ի :  
 —)(—

ՀԱՅ ԲԵՄԻՆ

ՄԱՌՅՈՒԱԾ ԿՈՐԻՉՐ

Մեր հանրային կեանքին ամենէն ախար, ամենէն ցաւալի երեւոյթներէն մէկն ալ սա է որ մեր հասարակական գործիչները իրենց գործունէութեան փոխարէն ո՛րքէ վարձատրութիւն, ո՛րքէ քաջալերութիւն չա՛նանալէ զատ, նոյն իսկ հալածուած են գրեթէ միշտ:

Իսկ եթէ երբեմն պատահի որ մեր վայրկեան մը մտաբերենք մեր մէկ հասարակական գործիչը, վայրկեան մը ոգեւորուինք անով, առ ալ սովորաբար անոր մահէն ետքը կը լլայ. ազմկալից հոգեհանգիստներ, փքուն, ճուռմբան դամբանականներ կը թնդացնեն մթնոլորտը երբ արդէն հասարակաց փշոտ ասպարիզին անձնուէր գործիչը արիւնքամ, հալ ու մաշ եղած, մեռած է:

Եւ այն ժողովուրդը, որ իր հարազատին կենդանութեանը, անոր պատառ մը հաց, ու մպ մը ջուր չէր տուած, այժմ շքեղ պատկեր կը զետեղէ անոր սեւ գագաղին շուրջը:

Մենք երբե՛ք չենք ուզեր ուրանալ թէ ուրախաւիթ, մխիթարական է տեսնել ժողովրդական երախտագիտութեան, չերո՛հ համակրանքի այդ ցոյցերը:

Սակայն գժբարտաբար այդ ձեւակերպութիւնները, այդ ցուցամուկութիւնները մեր մէջ այնքան առաջ զացած են որ, շատ անգամ միմիայն հոգեհանգիստ սարքելու, ուռուցիկ բառեր արտասանելու տենչէն կուրացած, չենք կրցած որոշել, զանազանել ժողովրդին ճշմարիտ զաւակը կեղծէն:

Ահա՛ այն ախար, այն սեւ ժտածումները, որոնք գրաւեցին մեր միաքը երբ յիշեցինք հայ թատերական բեմին երբեմնի մէկ վաստակաւորը, որ ժամանակ մը մեր սրտին այնքան մտիկ ապրելէ ետք, այժմ, մոռցուած, լքուած է ամենէն:

Փիլիպէ, հեռաւոր թաղի մը աննշան, ազքատիկ տնակին մէկ անկիւնը նետուած է Փասուլիանճեան: Երբ ինչ հայ բէմի ստեղծագործութեան անխոնջ մշակներէն մէկը եղաւ ան, մեր սրտի ու մտքի յեղափոխութեան կարիճ շինուորնէն մէկը:

Սրբէն բաւական խօսուած է այն մեծ կարեւորութեան, այն հզօր ազդեցութեան մասին, որ թատրոնը ունի ժողովրդին բարոյականին ու կրթութեան վրայ, մանաւանդ մեր մէջ, ուր հայ ժողովուրդը ստրուկ, խաւար տղիտութեան մէջ թաղուած պէտք ունէր թատրոնին, զեղարուեստներու այդ զեպեցիկ ճիւղին առողջ ու կենսատու ազդեցութեան:

Մեր նպատակն այդ չէ: Մենք կուզենք «արժոււմտի ընթերցողներուն, մանաւանդ զգայուն, բարեկեցիկ Փիլիպէցիներուն ցոյց տալ, մասնաւոր ընել հայ բեմի այդ վաստակաւոր գործիչը որ եկած է ապաստան փնտռել իրենց մօտ, վերջին ծայր թշուառութեան մասնուած:

Այո՛, Փիլիպէցիներ, ձեզի մօտ, ձեր քովէ փասուլիանճեանը՝ կեանք տուէ՛ք անոր, ժողովրդին այդ հալած, մաշած գործաւորին: Անիկայ կարօտ է ձեր նպատարին, արժանի ձեր խնամքին:

Ո՛չ եռանդը և ո՛չ միջոց կը պակսի ձեզ: Յոյց տուէ՛ք թէ դուք կը յարգէք, կը պաշտէք հայ բեմի, հասարակաց կրթութեան և բարոյականի ծերացած, ընկած զինուորը, որուն երբեմնի այնքան բոցավառ երակները այժմ ցամքած, սմքած են: Մաշած հիւժած են անոր զօրաւոր, ցնցող թոքերը որոնցմէ դուրս թռած ամէն մէկ բառ, ամէն մէկ հառաչանք այնքան յուշած, այնքան ալեկոծած են մեր սրտերն ու մտքերը:

Եւ հիմայ չի կրնար տանիլ ձեր երկրի խիստ կլիման: Օգտուէ՛ք անոր, աւելի մեղմ, աւելի փափուկ օդ: Եթէ ո՛չ, մեր դեռատի

զեղարուեստին այս ծաղկին ալ պիտի թռուի, խամրի ժամանակէն առաջ, ուրիշներուն պէս: Եւ այն ատեն դուք ի զուր պիտի թրջէք անոր սեւ հոգը ձեր ազի արցունքներով: Ի զուր պիտի զարգարէք անոր ցուրտ գագաղը ձեր խնկարոյր պատկերով...  
ՎԷՏԱ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պէյրուս, 14 Փետր.

Այսօր, փետր. 14 ին կիրակի, ճիշդ կէս օրին թուրք զինուոր մը հրացան պարպեց Ռաս-Պէրութի կողմը գտնուած Մառտի կեղեցիկէ մը ներս: Առ միջոցին կաթուղի քննչ. մը որ քարոյ կը խօսէր, թուրքին առ յանդգնութեան կատարած և կեղեցիկին եղած նախաձեռնութիւնները «քարոյ կը ձգէ և «Յիսուսը պաշտօնը թող ինձի հետեւի» ըսելով դուրս կը վազէ, զինուորին ձեռքի հրացանը կառնէ և կառք մը վարձելով կը վազէ կառավարութեան դուռը:

Կաթուղի քահանան սանդուղներէն վեր ելածին պէս կսկսի պօռալ կանչել «ո՛վ է նայիմ առ տեղի մեծը...» կառավարողներ զինքը վալիին սենեակը, հոն ալ ձայնը չի ցածցներ և վալին կստիպէ իրեն հետ մէկտեղ ժրանսական հիւպատոսարան երթալու: Հիւպատոսին հետ կէս ժամէ աւելի տեսակցութիւն մը կունենան. չենք գիտեր թէ ինչ հետեւանքի եկան, սա յայտնի է որ հրացան պարպող զինուորը բանտ դրուեցաւ:

Իայց բանտարկութիւնը քրիստոնեաներէ զատ մահմեդականներու և հրեաներու համար արքայութիւն ըսել է: Այս վերջիններս ինչ տեսակ ոճիւր ալ գործած ըլլան՝ բանտին մէջ առատ կեր ու խում կստանան կառավարութեան և նոյն իսկ շաքար օրերը աչատ են բանտին կից կառավարութեան ընդարձակ ու զեղեցիկ պարտէզին մէջ ման

գայու, և մինչև իրիկուն զբօսնելու, այնպէս որ եթէ մէկուն պայմանաժամը լրանայ և ազատ ձգուի, կտճապարէ նոր յանցանք մը գործելու և բանտային հեշտ կեանքը վայելելու: Ուրեմն թող վաղէն և զան բոլոր ոճրագործները, միայն թէ քրիստոնեայ չըլլան. ա՛խ, անոնք եթէ բանտարկուին, բանտին բոլոր տանջանքները կը կրեն:

Ն. ԳՍԿ

Ադիսաբեյրուս, 25 Փետր.

Եգիպտոս Հայութեան այն մասը կը կազմէ, որու վրայ համեմատաբար քիչ կը խօսուի ու քիչ կը գրուի մեր մամուլին մէջ: Նկատի եկերքի ազգային կեանքը, սկսեալ տեղացիներու մեծաւական անշարժութենէն, մինչև զաղթականներու ցաւալի վիճակը, անձանթ է Հայութեան միւս մասերուն:

Եգիպտոսի բնիկ հայերը գաղթականութեան սկիզբները շատ բռնաբար մտածեցին, շատ աշխատեցան ու մեծ օգնութիւններ հասուցին կրակներու մէջէն աչատու իրենց խեղճ ազգակիցներուն, բայց այսօր Եգիպտական սփիւքներու պէս՝ կը դիտեն անզգայ իրենց աչքերուն առջեւ պտրղուող խեղճութիւնը առանց ի դուր շարժելու:

Գաղթականները ինչպէս ամէն տեղ հոս ալ տուին այն զոհերը որ այդ կեանքին պահանջներն են. բարոյաւան ու նիւթական անվերջ տանջանքներ շատ թրջուառ ընտանիքներու սուրբը քանդեցին, շատ հիւանդներ մաշեցուցին, որոնք աշխատեալներու պէս թափեցան մի առ մի, իրենց վերջին հանգիստը եգիպտական դերեղմաններու մէջ գտնելով: Այս գժբարդ զոհերը իրենց ետին ձգեցին անօթի, անպատար որբերու շղթայ մը որուն օղակները երթալով կը բաղմանան Գառուսիէն ալ հորէն ու սուրէն ազատուած որբերուն մէկ մասը նետեցին Եգիպտոս, այնպէս որ Ազգ. քոստիկոյ որբերը այսօր ամէն տեղէ աւելի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՊԻՍԿԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Շար. Աստուծոյ քիտե՛ն և Վերջ Բ.

Ոնդիրը Նոր-Ձեղանատի կղզւոյն կը վերաբերի:

«Շարժում» ընթերցողները արդէն ծանօթ են այդ լուսաւոր կղզւոյն բնակիչներու, անոնց քաղաքական կազմին, կառավարութեան ձեւին, տիրող առաջադէմ ու արմատական քանի մը օրէնքներու հետ:

Նոր-Ձեղանատի Լճարա եղած ընդհանուր ներկայացուցիչը (այժմ Տիար P. Roeyers) Անգլիական «Ազ-

գային հանդէս» թերթի մէջ, զետեղեր է խիստ չահագրգիռ յօդուած մը, որ կը վերաբերի կղզիին մէջ 1898 թուին ընդունուած (քուէարկութիւնով) օրէնքի մը: Այդ օրէնքին առնչուն է «մեր հասակի կենսաթոշակի օրէնք»:

Կղզիի կրկու ժողովները քուէարկեցին և ընդունեցին այդ օրէնքը 3 տարի ժամանակով՝ իր հասարակագիտական փորձ մը: Եթէ 3 տարի ժամանակամիջոցի փորձը յաջող արդիւնքներ ցուցնէ, բնականօրէն՝ պիտի այնուհետեւ յարատեւէ իր մշտական օրէնք մը. իսկ եթէ արդիւնքը դիտուեցաւ իբր ոչ ձեռնառ կամ եղած ծախքերուն անհամապատասխան աղէկութիւն բերող պիտի ջնջուի:

3 տարուան փորձի ամէն ծախքերը պիտու թիւնն առած է իր վրան եւ

պիտական հաշուեկշիւին մէջ իրր առանձին յօդուած մը ներմուծած է:

Իսկ այդ ծախքերն այնքան ալ քիչ ու աննշան չեն: Միայն առաջին տարուան ծախքը նախատեսուած է 100,000 լիւր կամ մօտ երկուք ու կէս միլիօն ֆրանք:

Այդ օրէնքի էութիւնը հետեւեալն է:

Այն ամէն անձերը (այր թէ կին), որ 65 տարեկան հասակին հասեր են, պէտք է պիտական գանձարանէն տարեկան 450 ֆրանքի չափ կենսաթոշակ մը ստանան: Կենսաթոշակը «անզգաղբում և անձեռնմխելի» է ցմահ: Կենսաթոշակ կը ստանան այն անձերը, որ կը համապատասխանեն հետեւեալ պայմաններուն.

Ա. Առնուազն 25 տարի կղզւոյն մէջ պիտի ապրած ըլլան և արդէն անդամ պիտի դրուած ըլլան տեղա-

կան հասարակութեան:

Բ. Արողջ կենսաթոշակը կը ստանան միայն այն անձերը, որոնց եկամուտը առ առաւելն 850 ֆրանքի կը հասնի տարեկան: Ասկէ աւելի եկամուտ ունեցողին կը վճարուի 450-էն պակաս: Եթէ եկամուտը 850 էն 35 ֆրանք աւելի է, 25 պակաս կը վճարուի, եթէ 50 աւելի է, 50 պակաս կը վճարուի եւ այլն. միշտ ամէն մէկ 25 ին, 25 կը պակսեցուցուի թողակէն, մինչև որ եկամուտը կազմէ 1300 ֆրանք, եւ յայտնուի չի ստանայ պիտու թիւնն: 25 տարեկան նոյնպէս այն ձեռներին կամ պատուր, որ 15,000 ֆրանք ընդհանուր դրամազուլու մը ունի, որովհետեւ այդքան դրամազուլու չափ անձ մը կերակրելու համար բուստար կը տեսնուի կղզիին մէջ:

Գ. Կենսաթոշակէ կը զրկուին այն

անպաշտպան, յետին թշուառութեան մասնուած են:

Ինչպէս կապրին այդ պղտիկները, ո՞վ կը կերակրէ զանոնք. հետաքրքրուող չկայ. ո՞չ մէկ մարմին, ո՞չ մէկ անհատ կրցած է մինչեւ հիմա հիմնական բան մը ընել անոնց, սրոնք իրենց մայրերու ձեռքէն բռնած—եթէ երբեք մայր ալ ունին—չուարած ոչխարներու պէս, այսօր Ազգատախնամին կը դիմեն, վաղը թաղ. ի որհրդին, օր մը տունէ տուն, գրասենեակէ գրասենեակ կը վազեն, ուրիշ օր մըն ալ յուսահատ կեղծեցիին դուան առջև կը սպասեն մէկու մը՝ որ իրենց հաց պիտի բերէ և որ միշտ չի գար: Երբեմն երբեմն իրբեւ ոգորմութիւն անոնց առջև ափ մը բրինձ, կտոր մը շոր հաց կամ մէկ երկու գրու չկրնտեն. բայց այդ ամբողջը ժամանակաւոր ստիպանքներ են միայն, ու վաղը անոնք նորէն անօթի են, նորէն ողորմութեան ձեռք պիտի երկընցեն. ծանր հիւանդներու մարմին մէջ ներմուծուած մօր ֆիւր թմրութիւն միայն առաջ կը բերէ, բայց ոչ բժշկում:

Ով որ քիչ մը հետաքրքրուի այդ փոքրիկ դժբաղդներուն կեանքով, պիտի տեսնէ թէ ինչ արդահատելի վիճակ ունին անոնք, իսկ եթէ օր մը աղք. վարժարանին ճաշարանը այցելէ, ցամաք հացով կերակրուող տղաքները արդէն ամէն բան կը պատմեն...

Որբերը հիմնական օժանդակութեան մը պէտք ունին, իրենց ապագային ապահովութիւնը կուզեն:

Եզրպտոսի հայ գաղթականներու վիճակը շատ մը բաներէ առաջ, որբանոցի մը հիմնարկութիւնը կը պահանջէ: Եզրպտոսի հարուստ հայերը իրենց անցեալի աշխատութիւնները եթէ յիշեն և միտքերնին բերեն այն ջանքերը որ ըրին գաղթականներու հանդստին ու բարելաւութեանը համար, շատ շուտ պիտի համոզուին որ, քիչ ժամանակի մը մէջ, յարատեւ աշխատութիւնով,

պղտիկ զոհողութիւններով պիտի կարողանան հիմնել որբանոց մը, ուր Ձրկուածները իրիկունը պաւկելու անկողին մը պիտի ունենան, յերկը քիչ մը կերակուր, ու արհեստ մը սորվելով կամ ուսում առնելով՝ ապագանին ալ քիչ ու շատ պիտի ապահովեն:

Պօլսի Պատրիարքարանը հայ հարուստները կը հրաւիրէ Հայաստանի որբանոցներուն օգնութեան հասնել: Եթէ Պօլսը հետու է, եթէ Վանը և Մուշը մեղմէ շատ հեռու են, մօտը եզրըներուն վրայ խզճանք ու անոնց համար Ազգային տուն մը հիմնելու աշխատինք: Մեր հայ հարուստները այս տեսակ գործերով միայն կրնան իրենց վրայ ծանրացող պատասխանատուութիւններու մէկ մասէն ազատուի:

Ա.

ՆԱՄ ԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր:

Ազգատախնամ գրկելով ձեզ ներփակելով իր քառամսեայ գործունէութեան հաշուեկէտը, կը խնդրէ որ հաճիք հրատարակել զայն ձեր մօտակայ թիւերէն մէկու մէջ:

Այս առթիւ կը յայտնենք Տօքթ. Բ. Եղազեանի որ յօժարակամ յանձն առաւ դարմանել մեր բոլոր աղքատ հիւանդները, Տ. Գ. Թօգաթլեանի որ 50 0/0 զեղջով կը պատրաստէ մեր զեղազիրներն և Տ. Գ. Թօմիրեանցի որ Ա. Խնուրի առթիւ աղքատաց թաշխուկու համար 40 եարանոց ծրար մը մէջ ընծի նուիրած է:

Հարկ կը համարենք յայտարարել նաեւ թէ Ֆիլիպէ բնակող ամէն հայ անհատ ազատ է ամէն կիրակի կէս օրէն և տարբեր 2—3, Ա. Եկեղեցւոյ կից տունը ներկայ գտնուելու մօտէն տեղեկ ըլլալ Ազգատախնամի գործառնութեան: Այս նպատակաւ դիմող ազգայնոց ի հարկին սիրայօժար կը տրուին տեղեկութիւններ և բացատրութիւններ:

Մնամք յարգանքով ի դիմաց Ազգատախնամի Աստեղագիր Ատենապետ Ա. Յ. Սվանեան Յ. Գ. Երկանեան Փ. Պօլս, 5 մարտ

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'ԳՍԱՍՄՍԵԱՅ ՀԱՇՈՒԵԿՆԻՌ' and 'Այլախախնամ Մասնախմբ. Փ. Պօլսոյ'.

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'ԵԼՔ' and 'Բնկայպիրներու ապագրութեան'.

ՔՐՈՆԻԿ

«Մշակի» մէջ կը կարգանք հետեւեալը.—Որոստտանի սուլտանը թշուառների վիճակը ամօքելու կոչը ընական էր, որ արձագանք կը գտնէր նոյնպէս մարդկութեան մի ուրիշ ցաւատանը մասի՝ հայ գաղթական գիւղացիների որում: Սօչիի շրջակայ հայ գաղթական երկրագործները առաջին առաջարկին իսկ փութացին մասնակցել ընդհանուր ժողովարարութեամբ և այդ նպատակով հաւաքեցին 25

անձերը, որ 5 կամ աւելի տարի բանտարկութեան են դատապարտուեր, կամ քանի մը շարագործութիւններ (որոնց տեսակը կը յիշէ օրէնքը) բրած են, մէյ մըն ալ այն ամուսինները, (այր թէ կին) որ ամուսնական առաջասար ձգեր փախեր են 6 և աւելի ամիս:

Դ. Ձինացիները եւ ուրիշ ասիական գաղթականները, օտարազգատակները եւ այն անձերը, որոնց տեղացի գործելը 5 տարիէն պակաս է կը զրկուին այդ սրտօժութիւնէն: Իսկ բնիկ կիսավայրենի Մասրիները կօգտուին այդ օրէնքէն:

Ե. Վերջին կէս մըն ալ, կենսաթոշակ ստացող ծերունիներ պիտի վերկայարար մը ներկայացնէ իր համայնքէն, որ «Լաւ ու բարոյական բնոյթ» մը կամ «լաւ համբաւ» մը ունի և որ զէթ վերջին 5 տարիները

ըր «խիստ» կամ սակաւապա ու «յարգելի» կեանք մը անցուցեր է:

Առաջին տարին կենսաթոշակը ստացողներուն թիւը հասած է 5-6000 անձի:

Այս է նոր օրէնքը, որ մենք «յառտաղէմ, լուսնոր» անուանեցինք: Ետեանը կրնան զարմանալ, թէ ինչ կայ այդ վտրիկ օրէնքին մէջ, որ այդքան կողակտէ յօդուածադիրը: Ետ ապա ինչ է, կը պնդենք մենք:

Աշխատաւոր բանուորը «կէս օրէն» մինչեւ 65 տարին կաշխատի, արիւն քրտինք կը թափէ... իր ջղուած անքերովը շատ մը Ռոչիլաներ կը հարստացնէ, շատ գրամատէրերու գրպանները կը շնցնէ. իսկ երբ հա-

պուս սիմիտոր, որը մի ծանօթ հայ վաճառականի կողմից 175 բուպլի փողի վերածվեց և յանձնվեց հարկ եղած տեղը: Որքան էլ չնչին լինի այս օգնութիւնը, դա կրկին անգամ եւս ցոյց է տալիս, որ հայ շինականը իր ծով-թշուառութեան մէջ իսկ ընդունակ է ուրիշ կարօտեալների մասին էլ մտածել և իր լուսնային խնայել քրիստոնեայ բաղդակիցներին:

—«Բիւզանդիոն» կը գրէ թէ հայ-կաթոլիկներու Պօլսոյ պատրիարքը, Աղաբեան Գեորգիայի, պաշտօնապէս հերքած է այն լուրը թէ՛ Վանի շրջակայ գիւղերուն մէջ կաթոլիկութիւն ընդունած հայերը կրկին իրենց Մայր-Եկեղեցւոյ գիրկը դարձած են:

—Վեհափառ կաթոլիկոսը Ջատուկէն ետքը էլ միաժին պիտի վերադառնայ: Պաշտօնական և ընթացիկ գործերը մասին կարգադրութիւններ ընելու համար, էջմիածնի միաբանութեան անդամներէն մէկը կանչուած է:

—Կիմանանք թէ համբաւաւոր հայ արուեստագէտ Վահրամ Սվանեան և իր մայրը տկն. Մարի Սվանեան կողկաս մեկնած են, ուր մտադիր են մէկ քանի նուագահանդէսներ ստորքել Թիֆլիսի և Պաքուի մէջ:

—Շուշեցի յայտնի հայ դրամատէր մը Մ. Առաքելեան յանձն առած է իր սեփական ծախքով քաղաքին մէջ վարժարան մը կառուցանել որ պիտի արժէ 250,000 Ֆրանք:

—Ամերիկայէն մեկ կը գրեն թէ «Տիգրիս» խմբագրութեան մէջ փոփոխութիւններ կատարուած ըլլալուն, յիշեալ թերթը մէկ քանի շաբաթէ իվեր չէ հրատարակուած:

—Սարաճեան որբագանի մասին Տիգրիսի բացած քուէարկութիւնը աննպաստ արդիւնք ունեցած է սրբազանին նկատմամբ: 320 քուէ «ոչ կամիմք» պատասխաներ են ու միայն 42 քուէ ելած է ի նպաստ Սարաճեանի: Բայց կերևայ թէ Սրբազանը քուէ մուէ մտիկ ընելու տրամադրու-

սաւ այն տարիքին, երբ այլեւս աշխատել չէ կարող՝ լողորմին կը մնայ բաղդի կամքին, փողոցի մէջ:

Հնադարեան սարուկը, միջնադարեան ճորտը և ներկայիս աշխատաւոր անասունը այդ կողմէն աւելի ապահով են, քան ներկայիս բանուորը: Բանուորը կրնայ անօթի մեռնիլ փողոցի սաւյաթակին վրայ, իսկ նախկին սարուկն ու ճորտը, այս օրուան եզն ու կովը միշտ կրնան վստահ ըլլալ, որ իրենց աէրը անօթի չի ստակեցուցուր զիրենք... ա՛ռ առաւել՝ կը ծախէ ուրիշ մը:

Այդ է պատճառը, որ այս չնչին օրէնքը, այդքան միխիթարական կերեւայ մեզի, որովհետեւ կը ձգտի իրապէս ապահովել բանուորի մը, աշխատող անձի մը սեւ ու վտանգաւոր ծերութիւնը:

ԱՄԱ

թիւն չունի . ինք ուղեր է սուս- նորդ ըլլալ և պիտի մնայ :

Այս առթիւ մեր Ամերիկայի թղթակիցը կը գրէ թէ՛ եթէ Սրբազանը քիչ մըն ալ յամառի . Ամերիկայի հայ գաղութը սուրիշ կերպ փառաւոր երթաւ բարով պիտի պարտաւորի ըսել :

—Ուէսթմինստրի գուքը կոչ մը հրատարակած է ի նպաստ հայերուն որոնք մօտ 80,000 հոգի , սովէն կը տանջուին : Այդ կոչին մէջ կը յայտնէ թէ գէթ մէկ միլիոն ֆրանք անհրաժեշտօրէն պէտք է , ցորեն գնելու և որբանոցներու օգնութեան հասնելու համար :

—Պ. Գեորգ Ղարիպեան որ բնիկ Ղառնացի է և երկար տարին երէ ի վեր Ազգ. վարժարանին մէջ եկեղեցական երաժշտութեան և կրօնագիտութեան դասերը կաւանդէր . Ղառնացիներու միաձայն հաւանութիւնովը վաղը կը մեկնի Պօլիս քահանայ ձեռնադրուելու քաղաքիս Ս. Եկեղեցւոյն վրայ :

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ**

**ԱՐԵՒԵԼԵՆ ԽՆԴԻՐԸ**

«Թան»ի վերջին թուին մէջ «Արեւելեան խնդիրը» վերնագրով խմբագրականէն կը քաղենք հետեւեալը :

«Բանի մը շարժմէ ի վեր Արեւելքէն եկած լուրերը մեծ մտածանշուիւն կը պատճառեն ամէն տնտես որոնք ճշգրիտ դադար մը ունին այդ կողմերու անկայուն քաղաքականութեան վրայ :

Պօլսոյ մէջ անձանթ վտանգի մը տեսակ մը տարտամ նախադասուցը կը տիրէ բոլոր սրտերու մէջ : Ամենուն բերանը կը շրջին տեսակ տեսակ եղբրական պատմութիւններ ունց հանդիսավայրն է Երլուզի պայտաը : Վիէննայի և Լոնտոնի լրագիրները կը պատմեն պալատին մէջ տեղի ունեցած յափշտակութեան մը մանրամասն պարզաները :

Անգլիացի երիտասարդ ճէնգըլմէն մը Սուլթանին հարէմին անթիւ բանաւարկեալ չեքքէզուհիներէն մէկուն կը սիրահարի : Ներքնապետին հետ կը համաձայնի , շնորհիւ ոսկիներու հրապոյրին . և Լէյլէի Գաւրաի գիշերը կը փախցնէ սիրուհին Պօմպայ մեկնող շոգենաւով մը :

Այս գէպքը խիստ յատկանշական է . անիկա ցոյց կուտայ որ բարձրը երբեք չեն փոխուած Պօլսոյ մէջ և որ , քաղաքակրթութիւնը լոկ արտաքին ցոլք մըն է որ շուտով կը մարի : Այս բանը ալ աւելի զգալի կըլլայ երբ նկատի առնենք Սուլթանին Հայաստանի նկատմամբ բռնած դիրքը :

Կերեւալ թէ Սուլթան Համիտ միտքը գրած է երբեք ուշադրութիւն չի դարձնել Փոքր Ասիոյ

կոտորածներէն ազատ մնացած դժբաղդներուն վրայ : Եւրոպական զթատարութիւնը կը ջանայ բուժել այն վէրքերը զորս քաղաքականութիւնը չի կրցաւ կամ չուզեց արգիլել : Որբանոցներ Հայաստանի որբերուն պատուարան մը հայթայթած էին , ու Սուլթանը կը հրամայէ վակել զանոնք : Փողոցները լի են անօթի , անպաշտպան , անսքաղարներով , և ասիկա այն առեմն երբ սովը կուգայ ամբողջացնել իւրատերու շահատակութիւնները ու Ռուսիա կաշխատի իրենց տեղերը դարձնել անագորոյն մահուան ենթարկուած փախտականները :

Ուէսթմինստրի գուքը կոչում կընէ Եւրոպայի : Սիրելի է յուսալոր ժողովուրդներու խղճմտանքը պիտի արթննայ և թոյլ պիտի չիտայ կառավարութեանց որպէս զի մարդկութեան զէմ նոր ոճիւրներ գործուին :

Ժամը եկած է քարենորոգմանց գործը ձեռք առնելու համար : Սպասելը ուժ տալ է այն վտանգաւոր խորհրդականներուն որոնք թուրքիան կորուստի մատնելով , անանկ հրդեհ մը առաջ պիտի բերեն , ուրկէ ամբողջ Եւրոպա պիտի ֆրաստի : Պէտք է ժամանակին միջամտել Հայաստանի գործերուն : Պէտք է նաեւ ժամանակին արգիլել որ Մակեդոնիան , ուր Սուլթանը իր զօրքերը կը համախմբէ և ձեռքի տակէ Ալպանացիները կը գրգռէ , կուռի նոր դաշտ մը չի բանայ թշնամի ցեղերու մէջ :

Ե՛րբ պիտի հասկնան որ Արեւելքի մէջ խառնաշփոթութեան մը առաջքն առնելու միակ միջոցը , արդարութեան ու յառաջդիմութեան ծրագրի մը գործադրութեան անխնայ աշխատիւն է , և որ , Եւրոպայի կը բաւէ անկեղծօրէն համաձայնիլ , կարենալ գիմագրելու համար Բ. Գրան չկամութեան , իսլամական մոլեռանդութեան և Սուլթանին մաքիավելականութեանց :

**Թ Ո Ւ Ի Ք Ւ Ա**

Ի որ փոխառութեան մը մասին Անգլիոյ , Ռօշիլտի և Լոնտոնի թուրք գեոպանին միջեւ բացուած բանակցութիւնները յաջող արդիւնք են ունեցեր : Օսմ. կառավարութիւնը , այդ կարգադրութեամբ 600,000 օսմ. ոսկոյ շահ մը պիտի ունենայ :

—Պօլսոյ Բունաց գեոպանը Բ. Գրան ծանուցագիր մը ներկայացուցած է , ուր տրտունջ կը յայտնէ թէ Թուրքիա չի յարգեր խաղաղութեան դաշնագրին յոգուածները քաղաքական յանցաւորներու ներման , տուրքերու և զատատանական գործերու մասին : Այս ծանուցագրին մէկ պատճէնը զրկուած է նաեւ զեւպաններուն անոնց միջամտութիւնը խնդրելով :

—Պօլսոյ մէջ լուր կը շրջի թէ

Զմիւռնիս փախած իսլամ կրեւտացիները , զրգուած են թուրքերը որոնք յարձակելով յոյներու վրայ անոնցմէ մէկ քանին սպաններ են :

Մանրամասն յուրեր դեռ կը պակսին :

—Սալպարի Բ. Գրան ծանուցագիր մը զրկած է ուր պաշտօնապէս ապահովութիւն կուտայ թուրք կառավարութեան թէ՛ Անգլիա երբեք գիտաւորութիւն չունի Սուտանը զրուելու , և թէ անիկա միշտ պիտի յարգէ Սուլթանին գերիշխանութիւնը Սուտանի մէջ :

Բ. Գուռը գոհունակութիւն յայտնեց է Անգլ. կառավարութեան ցցուցած բարեկամութեան համար :

—Ալպանացիք տեղական ժողովներ գումարել է աք , Սուլթանին բաղամիտ հաւատարմական ուղերձներ զրկած են , յայտնելով որ իրենք միշտ կը փափաքին լաւ յարաբերութիւններ ունենալ քրիստոնեաներու հետ և խոյս տալ ու է կեբպով անոնց հետ թշնամանալէ :

—Անգլիոյ ազատական կուսակցութեան պետ , լրատ Ռօզպէրի Պօլիս եկած է :

**Պ Ո Ւ Լ Կ Ո Ր Ի Ա**

Պուլիարիոյ իշխանը Սօսլանիէի լուծման հրովարտակը ստորագրած է : Ի որ ընտրութիւնները պիտի կատարուին մայիս 7ին :

«Թան» կը գրէ թէ Կրէքօֆ-Բատուլալօֆ գահիճը հետզհետէ անհամաձայնութեանց կը բաղխի Կերեւայ թէ Բատուլալօֆ ու իր բարեկամները , չեն ուղած վաւերացնել նոր փոխառութեան պայմանադիրը , նաեւ Բատուլալօֆ գիտաւորութիւն ունի դահլիճէն հեռացնել Կրէքօֆն ու նաչէվիչը , նոր ընտրութիւններէն ետքը :

**Կ Ր Է Տ Է**

Երկիրս իշխանը շորս պետութեանց կարեւոր առաջարկ մը ըրեր է : Իշխանը ասոնցմէ իւրաքանչիւրին առաջարկած է 600,000 ֆրանքի փոխառութիւն մը ընել զիւղացիներուն բաժնելու համար փոքրիկ քանակութիւններով , որպէս զի կարողանան իրենց զիւղերը վերադառնալ և բնակարաններ կառուցանել :

Այս գումարը իբր կրեւտական կառավարութեան կողմէ փոխառութիւն պիտի չի նկատուի , այլ պետութեանց կողմէ կանխավճար մը գիւղացիներուն իրենց ներկայացուցիչին միջնորդութեամբ :

—Մահմանագրութեան ծրագիրը , 110 յոգուածէ բաղկացած վերջնականապէս ընդունուած է կրեւտական ժողովին կողմէ , ընդհանուր գոհունակութեամբ :

**Ռ Ո Ւ Ո Ւ Ա**

Ներքին գործոց նախարար ,

ազատական Կօրէմիքիին , ելեւմտական նախարար . Ռիթի Է.Ս. Սրնօղի նախագահ . Բօպէս օնօ . ձէֆի միջեւ ծագած անհամաձայնութիւնը , տագնապի մը տեղի տալ կը կարծուի : Կօրէմիքին կառավարիչ ժողովրդական կեդրոնական խորհրդարան մը հաստատել , նահանգական սէմթփօներու օրինակի վրայ ձեռուած (քաղաքային տեղական ժողով) , Այս տեսակ ծրագիր մը արդէն առաջարկած էր հայադղի իշխան Լօրիս Մեղիքօֆ , զոր Ալեքսանար Գ վաւերացուցած էր , բայց նոյն Բօպէսօձէֆի թելադրութեամբ մեր մերժուած էր :

**Ա Ձ Դ**

Վաղը առաւօտ ժամը 9ին , Պատ. Հայկ Ե. Եարաբման հայերէն լեզուով մասնաւոր քարոզ մը պիտի խօսի . նիւթն է «ՄԱՐԴՆ ՍՏԱՄՈՒՄ ԶԷՍ» կամ թէ հաշր զարգացած մարդկութեան զարգացումները չի :

**Ա Ձ Դ**

Հածի Արթին Մուրաւեան , խոհարար , և բողոքական տաճկական կերակուրներ զիւղ պատարաստել : Հասցէն Պապա Պապական սլճարան , յաղաքային պարսկերէն զէմ , թիւ 3 :

**ՎԱՐԴՈ**

**ԵՐԿՈՒ ՍԷՐ**

(ՀԱՅ ՅԵՂԱՌՈՒՄԱՆ ԿԵԱՆՎԷ)

**(Գին Ի Ֆրանկ)**

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնաի մէջ Շարժումի խմբագրատունը , Զիլիպէ Տ. Անտոն կոչի մօտ . Ռուսոյք Հայկ Մայիսեանի սլճարանը :

**Ա Ձ Դ**

Պ. Տիգրան Թիւֆէնկեան պատեւ ունի ծանուցանել իր յարգոյ յանախորդներուն , որ այս անգամ Ռուսուզէն վերադառնալով , Զրօսարան մը բացած է Տ. Պօղոս Փափագեանի սան զիմաց , ընկերակցութեամբ կօսթթիւն Ավրամօֆի , Զրօսարանին մէջ կը գտնուին ամէն տեսակ ըմպելիք , իրենց բոլոր պարգաններով Տ. Թիւֆէնկեանի ձեռքով պատրաստուած , և բողոքական տարեւեան ճաշակով թարմ կերակուրներ , զինքը խիստ աժան : Մաքուր ու ալազ սպասարկութիւն :

**ՍԻՆԱՐԻ ԹՈՒՂԹ**

Տիար Տիգրան Տուճանեան կը ծանուցանէ թէ ի Փ. Պոլիս Գուրուխանի զիմաց , կը վաճառէ Ազգ. Հիւանդանոցի ամենէն ընտիր նոր տեսակ սիկարի թուղթէն , զեղջևալ գիւնիով մեծաքանակ և փոքրաքանակ : Բարեգործութիւնը և շահր կը պահանջեն որ ամէն հայ գործածէ զայն , կան նաեւ Պօն , Վօլթօ և ուրիշ ամէն տեսակ թուղթեր : Բանձնարարութիւնք կը կատարուին ճշտելու և փոխով :

**ՕՏԳՈՎՈՐՆԻԿԷ : Ա. ՏՄԿՅՈՎԷ**

Печатница «Взаимность» Варна.